ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423, (0264)22338 gavariqaghaqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 144-Ա

«ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ, 8)-րդ, 24)-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 13)-րդ,16)-րդ կետերով, 81-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածխի դրույթներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ***որոշում եմ***

1. Ստեղծել «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկ /այսուհետ՝ Հիմնարկ/, որի գործունեության հիմնական նպատակներն ու գործընթացի կազմակերպման սկզբունքներն են՝

1) Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական /վտանգավոր/ ներգործության նվազեցումն ու չեզոքացումը.
2) Բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովումը.
3) Տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիության և տարածքների մաքրումը աղբից.
4) Աղբահանության և սանիտարական մաքրման պարտադիր և պարբերաբար իրականացումը նախատեսված սանիտարական սխեմային համապատասխան.
5) Աղբահանության վճարովի լինելը.
6) Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների մեքենայացումը:

2. «Գավառ համայնքն կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային հիմնարկի ստեղծման որոշումը և կանոնադրությունը ներկայացնել Գավառ համայնքի ավագանու հաստատմանը:
3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ